

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐՈՒ ՆԻՍՏԵՐ

Խորհրդարանական տարբեր յանձնախումբեր երեկ գումարեցին նիստեր, որոնց ընթացքին քննարկուեցան պանապան օրինակները:

Այգապին ապահովության եւ պաշտպանության խորհրդարանական յանձնախումբը երեկ ամբողջացրեց իր քննարկումը վերաբերեալ օրինակներին քննարկումը եւ պայն փոխանցեց խորհրդարանին:

Ժողովին ներկայ էին կենսոլորտի նախարար Միշել Մուսա, երեսփոխաններ Սամի Խաթաբ, Ուսթի Գաբրիել, Անուան Դանէմ, Աբրամ Շրեյնիս եւ այլ երեսփոխաններ:

Խաթաբ յայտնեց, որ յանձնախումբը մշակած է օրինակներ մը, որ կ'արտօնէ որոշումներ իրենց եւ որ ամենաառաջ պիտի սկսի գործադրուի Սեպտեմբեր 2003ին:

Արտաքին գործոց եւ արտերկրի իրանանցիներու հարցերու խորհրդարանական յանձնախումբը, գլխաւորութեամբ երեսփոխան Ալի խալիլի, քննարկեց Լիբանան - Եւրոպա գործակցութեան առնչուած համաձայնագիրը:

Խալիլ շեշտեց նշեալ համաձայնագիրին կարելորութիւնը:

Նիստին ներկայ էին տնտեսութեան նախարար Պասիլ Յիշիան, երեսփոխաններ Նեպիլ Պուսթանի, Ալի Օսէյրան, Նապիլ Խուրի եւ Անուան Արաբի, եւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէն Մոհամետ Իսա:

Արդարութեան եւ վարչական հարցերու խորհրդարանական յանձնախումբը, ներկայութեամբ նախարար Պասիլ Յիշիանի եւ երեսփոխաններ Ուալիտ Իտոյի, Մոհամետ Ռաատի, Ռոպէր Դանէմի եւ Պասիլ Մապրիի, քննարկեց ապահովագրութեան առնչուած հարցերը. ահարածեղ նկատուեցաւ էլեւմուտքի եւ առողջապահութեան նախարարներ Ֆուադ Մինիարայի եւ Մէլիան Ֆրէնտիի ներկայութիւնը յաջորդ ժողովին:

Էլեւմուտքի եւ պետական պիտուէի խորհրդարանական յանձնախումբը, գլխաւորութեամբ երեսփոխան Նախարարութեան ընդհանուր տնօրէն Այան Պիֆանի, քննարկեց ներքին գործոց եւ քաղաքացիութեան հարցերու նախարարութեան տարեկան պիտուէն եւ վաւերացրեց պայն:

Ժողովը քննարկեց նաեւ քարտատման վայրերու փակման որոշումը՝ շեշտելով նշեալ մարզին գործունէութեան դասաւորման աշխատանքը՝ պահպանելու համար կենսոլորտը եւ երկրին բնական գեղեցկութիւնը:

ՆԱԽԱԳԱԿ ԱՍԱՏԵՆ ԸՆՈՒԳԻՐ ՄԸ՝ ՉՕՐ. ԼԱՇՈՒՏԻ

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երեկ Սուրիոյ նախագահ Պաշտար Ասատէն ստացաւ հեռագիր մը՝ իբրեւ պատասխան Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով նախագահ Ասատի յղած իր շնորհաւորական հեռագիրին:

Նախագահ Ասատ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լախուտի, որ Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով շնորհաւորած է Սուրիան եւ վերահաստատեց Սուրիոյ պարկուկութիւնը՝ Լիբանանի:

Միւս կողմէ, Պասալ տայի մէջ նախագահ Լախուտ երեկ ընդունեց խմբագիրներու սենտիքայի եւ Արաբ Լրագրողներու Համադաշնակցութեան նախագահ Մըլիմ Բարամը, որ նախագահ Լախուտի փոխանցեց սենտիքային եւ համադաշնակցութեան առնչուած հարցեր:

Նախագահ Լախուտ յայտնեց, որ «Փարիզ - 2» ժողովին Լիբանանը շնորհակալութիւն յայտնեց իր տակ առնելով

Խորհրդակցական Հանդիպումին գործունէութիւնը:

Նախագահ Լախուտ ընդունեց քարտէրական Օրագիրներու Իսլամական Միութեան նախագահ շէյխ Հուսամ Խուտին Քարտէրական եւ նախկին երեսփոխան Անուան Թրապուլիսին, որոնք շնորհաւորեցին Լիբանանի անկախութեան 59րդ տարեդարձը:

Նախագահական պալատի հիւրերէն դարձան նաեւ բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն Կոր. Ռեմոն Ապար եւ Լիբանան - Քորէա Բարեկամութեան Միութեան մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Սեյիմ Անթաքիի եւ ընկերակցութեամբ Լիբանանի մէջ Հարաւային Քորէայի ղեկավար Քի Հոն Լի:

Նախագահ Լախուտ, իր կարգին, հեռագիր մը յղեց Օմանի սուլթանին՝ շնորհաւորելով Օմանի Ազգային տօնը, ինչպէս նաեւ այլ հեռագիր մը՝ Մարտի Մոհամետ Չ. Քարտէրի շնորհաւորելով Մարտի անկախութեան տօնը:

ԱԿՆԱՐԿ

ԽԱՂԱՂԱՐԱՐ ԻՆՉ ԻՏԵԱԼ ԵՐԹ՝ ԱՆԳԱՐԱ - ՊԱՔՈՒ - ՔԱՊՈՒԼ ԳԻԾԻՆ ՎՐԱՅ...

Ազգերական «Էյ. Էն. Էս.» պատկերասփիւռի կայանը, որ ծանօթ է իբրեւ ազգայնական - ռազմատենչ մետիա, ամենայն հպարտութեամբ կը հաղորդէ, որ թուրք պիտուորներու կողքին ազգերի պիտուորներ մաս կը կապեն Աֆղանիստանի մէջ խաղաղարար ուժերուն: Աւելի՛ն. Ազգայնականի Միւրի Մեծխը (խորհրդարան) 91 թեր եւ միայն մէկ դէմքուով համաձայն գտնուեցաւ ազգերի պիտուորներ իբրեւ թրքական ջոկատին մէկ բաժինը գործուղելու իր պիտուորները, որոնց ծախսերը պիտի հոգայ Անգարա: Իսկ Ուաշինգթոն, իր կարգին, այս առիթով չի պլանար իր պոնիւր Պաքուի, մէկ միլիոն տոյար «վարձատրութեամբ»...

Ո՛չ միայն հայ, այլեւ տրամաբանութիւն ունեցող ռեւի անհատի համար սոյն լուրը եթէ առաջին ակնարկով ծիծաղաշարժ կը թուի, ապա երկրորդ եւ ամէլի խորունկ հայեացքէ մը ետք կը թուի նաեւ վիրաւորական մարդկային արժանապատուութեան հաշուոյն:

Ինչո՞ւ: Պարզ է: Չէ՞ որ բոլորս ընդունած ենք ռուսական առողջ տրամաբանութիւնը, որուն համաձայն՝ ամէն մարդ նախ իր դրան առջեւ պետք է ալի:

Թէ՛ Թուրքիա, թէ՛ Ազգայնական ամենէն առաջ իրենք կարիքը ունին խաղաղարար ուժերու, որովհետեւ իրենք է, որ ունին մեծազոյն հարցեր, իրենց ուներուն դրուած են մեծ դատեր, քաղաքական ծանր թղթածրարներ: Անգարա ունի հայկական, կիպրական եւ քրտական հարցերը, Պաքու ունի Լեռնային Ղարաբաղի տագնապը, որոնք բոլորն այլ գար կը մնան անլուծելի, պարպապէս որովհետեւ Թալէթներու եւ Արաբութեան կողմէ ծառանգորդները յամառօրէն կը շարունակեն ուրացման եւ ծխուման իրենց ծախապաշտական քաղաքականութիւնը:

Արդ, ի՞նչպէս կարելի է ընդունիլ, որ այսպիսի յաւակնիկ այլոց հարցերն ու խնդիրները լուծելու, իսկ ի՞նչպէս կարելի է հաշտ աչքով դիտել Ուաշինգթոնի կեցածքը, նոյնիսկ եթէ յստակ են անոր տուն տուող պատճառները, իսկ՝ իրաքեան հարցով շահագիտական մտեցումները:

Յամենայնդէպ ամբողջ աշխարհը կը ծաղկէ նման ծիծաղաշարժ կեցածքներ: Եւրոպական Միութեան անդամակցութեան հարցով Թուրքիոյ երեսնէն պատուաւճ ընդ միանգամընդ միջոց բացալստած է «արդի» Թուրքիոյ դիմագիծը՝ քսանմէկերորդ դարու մարդուն համար: Իսկ պետք կա՞յ տակաւին «փոքրիկ» Պաքուի մասին խօսելու, երբ անոր «հպոր հայրը» օրն ի բուն կը խայտառակուի յաչս հանրային կարծիքին:

Կը մնայ, որ Անգարա եւ Պաքու փոխանակ իրենց շնորհուող օմանակութիւնները ի սպառ մտիչելու, այսպէս ըսած խաղաղարար ծիծաղաշարժ քայլեր առնելու եւ ինքնախաբէութեամբ օրորուելու՝ վայրկեան առաջ հարթեն իրենց սեփական խնդիրները, ճակատաբաց ընդունին իրենց պատմական սխալները, հատուցեն իրենց ճիտին պարտքը, որմէ ետք միայն մտածեն այլոց օգնութեան փութալու... Որովհետեւ պարտատէրերը երդուած են ամէն զնով պայքարի՝ յանուն իրենց արդար ու անկորնչելի իրաւունքներուն:»

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՀԱՉԴ

Տիկին Մարգարիտ Թնկրեան եւ դուստրերը՝ Տիանա եւ Ալին

Տէր եւ տիկին Լեւոն Թնկրեան եւ զաւակը
Տիկին Հայկունի Թնկրեան եւ զաւակուհի
Տիկին Անայի Թնկրեան եւ զաւակուհի
Գեորգ Անդրանիկ Մ. վրդ. Այվազեան
Տէր եւ տիկին Ժողովի Այվազեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Մկրտիչ Թահուլբեան եւ զաւակուհի
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, գարմիկին եւ հարազատին՝

ՍԵՊՈՒՆ ԹՆԿՐԵԱՆԻ (Ծնեալ՝ 1948ին)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 18 Նոյեմբեր 2002, արկածի հետեւանքով:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 19 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ա. Նշան Մայր եկեղեցու մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Համրա, Ուարտիէ, «Մասապիլ» շէնք, 2րդ յարկ, «Նաժմար» հիւանդանոցի կից, Չորեքշաբթի 20, Հինգշաբթի 21 եւ Ուրբաթ 22 Նոյեմբերին:

ՄԱՀԱՉԴ

Օրդ. Թագունի եւ Նորա Գարայկորեան
Տիկին Մարալ Գարայկորեան եւ զաւակը՝ Վահան
Տէր եւ տիկին Ժան Մարք եւ Վիլի (Գարայկորեան)
Ապպիկ

Տէր եւ տիկին Տիրան եւ Վարդենի Տաղատեան
Տէր եւ տիկին Ղազարոս եւ Մարի Կոստանեան
Տիկին Արուսեակ Գաբրիէլեան
Տէր եւ տիկին Կիրակոս Գաբրիէլեան
Տէր եւ տիկին Կարպետ եւ Հոփսիմէ

Թոփալգարաճեան

Տէր եւ տիկին Սազո եւ Նինա Գաբրիէլեան
Տէր եւ տիկին Սարգիս եւ Սիրուն Պատեյեան
եւ զաւակուհի

Օրդ. Սիրվարդ Քեօշկէրեան
Տէր եւ տիկին Մինաս եւ Սոնիկ Մարեան
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ՄԱՐԻ ԳԱՐԱՅԱԿՈՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Ալեքսանդրէթ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 18 Նոյեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Պէյրութի Ամբրիկեան հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 19 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Սայիլ Պատուրի Ս. Յարութիւն եկեղեցու մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրոն Շրպիլէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Ժեմաուի, «Հայեպեան» շէնք, Երեքշաբթի 19, Չորեքշաբթի 20 եւ Հինգշաբթի 21 Նոյեմբերին:
- Փոխան ծաղկեպակի կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել Ազգային Ռուբինեան վարձարանին:

ԵՐՏՈՂԱՆ ԿԸ ԲԱԽԵ...

Ժողովը քննարկեց նաեւ քարտատման վայրերու փակման որոշումը՝ շեշտելով նշեալ մարզին գործունէութեան դասաւորման աշխատանքը՝ պահպանելու համար կենսոլորտը եւ երկրին բնական գեղեցկութիւնը:

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երեկ Սուրիոյ նախագահ Պաշտար Ասատէն ստացաւ հեռագիր մը՝ իբրեւ պատասխան Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով նախագահ Ասատի յղած իր շնորհաւորական հեռագիրին:

Նախագահ Ասատ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լախուտի, որ Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով շնորհաւորած է Սուրիան եւ վերահաստատեց Սուրիոյ պարկուկութիւնը՝ Լիբանանի:

Միւս կողմէ, Պասալ տայի մէջ նախագահ Լախուտ երեկ ընդունեց խմբագիրներու սենտիքայի եւ Արաբ Լրագրողներու Համադաշնակցութեան նախագահ Մըլիմ Բարամը, որ նախագահ Լախուտի փոխանցեց սենտիքային եւ համադաշնակցութեան առնչուած հարցեր:

Նախագահ Լախուտ յայտնեց, որ «Փարիզ - 2» ժողովին Լիբանանը շնորհակալութիւն յայտնեց իր տակ առնելով

ԵՐՏՈՂԱՆ ԿԸ ԲԱԽԵ...

Ժողովը քննարկեց նաեւ քարտատման վայրերու փակման որոշումը՝ շեշտելով նշեալ մարզին գործունէութեան դասաւորման աշխատանքը՝ պահպանելու համար կենսոլորտը եւ երկրին բնական գեղեցկութիւնը:

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երեկ Սուրիոյ նախագահ Պաշտար Ասատէն ստացաւ հեռագիր մը՝ իբրեւ պատասխան Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով նախագահ Ասատի յղած իր շնորհաւորական հեռագիրին:

Նախագահ Ասատ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լախուտի, որ Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով շնորհաւորած է Սուրիան եւ վերահաստատեց Սուրիոյ պարկուկութիւնը՝ Լիբանանի:

Միւս կողմէ, Պասալ տայի մէջ նախագահ Լախուտ երեկ ընդունեց խմբագիրներու սենտիքայի եւ Արաբ Լրագրողներու Համադաշնակցութեան նախագահ Մըլիմ Բարամը, որ նախագահ Լախուտի փոխանցեց սենտիքային եւ համադաշնակցութեան առնչուած հարցեր:

Նախագահ Լախուտ յայտնեց, որ «Փարիզ - 2» ժողովին Լիբանանը շնորհակալութիւն յայտնեց իր տակ առնելով

ԹՈՒՐԵՒՈՅ ՆՈՐ ԿԱՆԱԿՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՃՏՈՒԼ ԿԸ ՄՍԱՆՁԵ

Ժողովը քննարկեց նաեւ քարտատման վայրերու փակման որոշումը՝ շեշտելով նշեալ մարզին գործունէութեան դասաւորման աշխատանքը՝ պահպանելու համար կենսոլորտը եւ երկրին բնական գեղեցկութիւնը:

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երեկ Սուրիոյ նախագահ Պաշտար Ասատէն ստացաւ հեռագիր մը՝ իբրեւ պատասխան Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով նախագահ Ասատի յղած իր շնորհաւորական հեռագիրին:

Նախագահ Ասատ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լախուտի, որ Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով շնորհաւորած է Սուրիան եւ վերահաստատեց Սուրիոյ պարկուկութիւնը՝ Լիբանանի:

Միւս կողմէ, Պասալ տայի մէջ նախագահ Լախուտ երեկ ընդունեց խմբագիրներու սենտիքայի եւ Արաբ Լրագրողներու Համադաշնակցութեան նախագահ Մըլիմ Բարամը, որ նախագահ Լախուտի փոխանցեց սենտիքային եւ համադաշնակցութեան առնչուած հարցեր:

Նախագահ Լախուտ յայտնեց, որ «Փարիզ - 2» ժողովին Լիբանանը շնորհակալութիւն յայտնեց իր տակ առնելով

ՖՐԱՆՍԱՅԻ, ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵՒ...

Ժողովը քննարկեց նաեւ քարտատման վայրերու փակման որոշումը՝ շեշտելով նշեալ մարզին գործունէութեան դասաւորման աշխատանքը՝ պահպանելու համար կենսոլորտը եւ երկրին բնական գեղեցկութիւնը:

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երեկ Սուրիոյ նախագահ Պաշտար Ասատէն ստացաւ հեռագիր մը՝ իբրեւ պատասխան Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով նախագահ Ասատի յղած իր շնորհաւորական հեռագիրին:

Նախագահ Ասատ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լախուտի, որ Բարեկարգ շաբաթական Շարժումի 32ամեակին առիթով շնորհաւորած է Սուրիան եւ վերահաստատեց Սուրիոյ պարկուկութիւնը՝ Լիբանանի:

Միւս կողմէ, Պասալ տայի մէջ նախագահ Լախուտ երեկ ընդունեց խմբագիրներու սենտիքայի եւ Արաբ Լրագրողներու Համադաշնակցութեան նախագահ Մըլիմ Բարամը, որ նախագահ Լախուտի փոխանցեց սենտիքային եւ համադաշնակցութեան առնչուած հարցեր:

Նախագահ Լախուտ յայտնեց, որ «Փարիզ - 2» ժողովին Լիբանանը շնորհակալութիւն յայտնեց իր տակ առնելով

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԹԱՌԱ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

ՀԱՅԿԵՐՈՅՑ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ՝ Կիրակի, 5 Յունուար 2003
«Տեմիս» պանդոկ: Երկուշաբթի, 6 Յունուար 2003, UNESCO
հանդիսարանին մէջ:

Մանրամասնութեան համար դիմել՝ հեռ. 01-249375 եւ 01-265899:

365 ՕՐԵՐԵՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախար՝ 300 տոյար:
Տըր եւ տիկին Ռուբէն Պապիկեան եւ զաւակուհի
19 Նոյեմբեր:

ԱՆՁՆԱԿԱՆ ՂԱՍԵՐ

• Նախակարթարանի աշակերտներու բոլոր միութեան համար: Ընդ. 03-570046:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

• Խաչատուր Բեռլիեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպակի Ֆաւարի Ս. Մատարոս եղած են հետեւեալ նուիրատուութիւնները:

Տըր եւ տիկին Արիստակէս Երվանդեան՝ 20 \$,
«Չեմի» ընկերութիւն՝ 20,000 լ.ո., տըր եւ տիկին Յարութիւն Բեռլիեան՝ 10,000 լ.ո., տըր եւ տիկին Մասիս Գիւրգիսեան՝ 10,000 լ.ո., տըր եւ տիկին Յակոբ Գոճայեան՝ 10,000 լ.ո., «Լա Մարի» ընկերութիւն՝ 10,000 լ.ո., «Յրիուտ» ընկերութիւն՝ 10,000 լ.ո., «Բոլիթի Ուան» ընկերութիւն՝ 10,000 լ.ո., տըր եւ տիկին Ստեփան Երվանդեան՝ 5,000 լ.ո.:

ԿՈՒՉՈՒԻ

• Առեւտուրով կը զբաղի՞ս, համալսարանական քաղաք, անգլերէն գիտե՞ս, ինքնաշարժ ունի՞ս, տարիքը 25էն վե՞ր է, կրնաս դիմել: Տաքս. C. V. 04 - 713816 կամ e. mail: recruitment@barternet - Lb - com.

ԿՈՒՉՈՒԻ

• Չորրորդ քար գամող մը: Ընդ. 03-963499:

ԿՈՒՉՈՒԻ

• Ոսկի փայլեցնող (ձիւլաձի) գործաւոր մը: Ընդ. 01-242549:

ՇԱՅ ԴԱՏ

ՇԱՅ ԴԱՏ

Ի ԲԵՐԱՆՈՅ ՔՈՒՄԱԷ

Թեև աշխարհացուցի եւ ծանրակշիռ գիւտ մը չէ վրացի փորձագետ Կեռիկ Խուրիչի վիճիտ արձանագրումը, որ Զաւախքի մէջ տիրող կացութեան համար յանցաւոր են վրացական իշխանութիւնները, սակայն ուշադրութեան արժանի է այն իմաստով, որ հրապարակային այս հաստատումը կու գայ վրացական կողմէն՝ քեկուզ ոչ պաշտօնական:

Երբ վրացի փորձագետը դիտել կու տայ, որ Զաւախքի հարցերուն 90 տոկոսը տնտեսական բնոյթ ունի, կը կարծենք, որ այդ մէկ հարցը իր համապարփակ ուղեցրեցէն պարպելու եւ սոսկ ստամոքսի կապելու անյոյս փորձ մըն է: Հակասական է նաեւ իր այն տեսակետը, որ Ախալքալաքի ռուսական խարխալը շրջանի անկայունութեան ազդակ է, մոռնալով այն փաստը, որ տուելով խարխալին մէջ աշխատանք ունենալու շնորհիւ, հազարաւորներու գէթ ապրուստի առօրեայ հարցերը լուծուած են:

Ընդունելով հանդերձ, որ շրջանին տնտեսական կացութիւնը ծանր է, ինչ որ դուռ կը բանայ յարակից եւ անկէ բխող դժուարութիւններու, կան սակայն անպահով, քաղաքականապէս անտեսուած եւ իրաւագրկուած բլլալու հանգամանքները, որոնք նույնքան ծանրակշիռ են եւ չեն լուծուիր միայն ապահով աշխատանքի կարելիութիւններու ստեղծումով:

ՀՕՄԻ կողմէ Զաւախքի օգնութեան ճիգը, տնտեսական կողմից, կը միտի Զաւախքի մեր եղբայրներուն ու յոյրերուն մէջ ամրապնդել այն հաստատումը, որ իրենք համայն հայութեան մէկ մասնիկն են, կը պատկանին հայութիւն կոչուող մեծ ընտանիքին եւ կը վայելեն անոր հոգածութիւնը:

Երբ վրացական իշխանութիւնները կ'ուզեն Զաւախքի կապակցութեամբ յատկապէս շրջանի եւ ընդհանրապէս հայութեան մօտ արդար ընդվզումի ալիքը մեղմացնել, շատ ընդհանրապէս գործնական առումով՝ քե՛ տնտեսական - ընկերային եւ քե՛ մանաւանդ քաղաքական իմաստով:

Մինչ այդ մեզի կը մնայ աւելցնել մեր օգնութեան չափը՝ Զաւախքի հայութեան, որպէսզի ան միշտ գորաւոր զգայ ինքզինքը:

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ԿՐԱՅԻ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՇԱՄԱՅՆ

ՋԱԻԱԽՔԻ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՂԱԽՈՐ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ձերտերին Հաւան» հիմնադրամին կազմակերպութեամբ վերջերս Երեւանի մէջ կայացաւ կողմասեան երեք պետութիւններու միջազգային խորհրդաժողով մը: Խորհրդաժողովի մասնակից՝ հակամարտութիւններու ուսումնասիրութեան միջազգային կեդրոնի տնօրէն զոպա Կէրրիկ Խուրիչի տնօրէնը, որ Զաւախքի մէջ տիրող ընկերային - տնտեսական անկայուն իրավիճակը պատճառ կը դառնայ տեղւոյն բնակչութեան դժգոհութիւններուն: Ան իր այս եզրակացութիւնը հիմնադրեց Վրաստանի մէջ ընկերաբաններու կողմէ կատարուած հարցախոյզի տուեալներով: Հարցախոյզին նպատակն էր յստակացնել մարդու եւ ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներու բռնաբարձման պատկերը շրջանին մէջ: «Զաւախքի հիմնահարցերուն 90 ան հարիւր տնտեսական պատճառ ունի: Հոն անկայուն իրավիճակի ստեղծման կարեւոր ազդակ է նաեւ Ախալքալաքի մէջ ռուսական խարխալին ներկայութիւնը եւ անոր հետեւ 2004 թուականին՝ կրնայ նպաստաւոր ըլլալ», դիտել տուած է Խուրիչի: «Երկիր» շարժաթիւթի այն նկատողութեան, թէ բազմաթիւ հայեր կ'աշխատին այդ խարխալին մէջ եւ այդպիսով կ'ապահովեն իրենց ապրուստը, Խուրիչի վերջին պատասխանած է, թէ նկատողութիւնը ճիշդ է եւ այդ պատճառով Վրաստանի իշխանութիւնները պէտք է ընկերային - տնտեսական աւելի աշխուժ քաղաքականութիւն վարեն Զաւախքի մէջ, բան մը, որ Խուրիչի վերջին իսկ հաստատուածով՝ «գերախառնարար այսօր գոյութիւն չունի»:

ԻՏԱԼԱՅԻ ՖԱՉՉԻ ԴԻՊՈՒԿ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԹՈՒՐԲԻՈՅ ԿԵՅՈՒՄԾՔԻՆ ՄԱՍԻՆ

Իտալական թերթեր լայն ձեւով անդրադարձան Թուրքիոյ մէջ կայացած խորհրդարանական ընտրութիւններուն: Այս իմաստով այդ թերթերը նաեւ անդրադարձած են Հայկական Յեղասպանութեան: Ստորեւ տրուած եւ Ֆրիլիփսօ Ֆաչչի ստորագրութիւնը կրող յօդուածը լոյս տեսած է իտալական «Էլ ձիոնալե» թերթին մէջ, Նոյեմբեր 7ին: Յօդուածին հայերէն թարգմանութիւնը հայերէնի «Ազգ» թերթին տրամադրած է իտալիոյ մէջ Հայաստանի դեսպան Գագիկ Պաղտասարեան:

«Մէկ բան կայ, որ ոչ մէկ ձեւով կրնամ հասկնալ: Բոլորը կը գրեն, թէ Թուրքիա իր պատմութեան ընթացքը փոխելու ճիգէն միայն մէկ քայլ անդին կը գտնուի, եւ թէ իսլամական կուսակցութեան յաղթանակը ճշմարտութիւնը պիտի ըսէ այս ազգին մասին, որ յաւերճական տատանումներու մէջ է Եւրոպայի (ուր դարեր շարունակ հզօր ուժ ներկայացուցած է) եւ Ասիոյ Անատոլի բարձրաւանդակներուն (ուր աւելի խոր արմատներ ունի) միջեւ, միանգամայն միտումնաւորութիւնը պիտի ըսէ այս պետութեան մասին, որ Եւրոպական Միութեան անդամակցելու համար պէտք է յարգէ մարդու իրաւունքները, պէտք է վերջնականապէս հրաժարի մահապատիժէն ու բանտային տանջանքէն, պէտք է աւելի հանդուրժող ըլլայ խղճի եւ քննադատութեան,

տեղեկատուութեան եւ արտայայտութեան, գաղափարներու եւ ցոյցերու ազատութեան եւ նման այլ հարցերու հանդէպ: Ընդհանրապէս՝ բոլոր այս դրական արժեքներուն մասին: Շատ լաւ: Սակայն ինչ որ չեմ կրնար հասկնալ, այն է, թէ կ'ուզէի գիտնալ, որ ինչո՞ւ ոեւէ մէկը Հայ ժողովուրդի տխուր ճակատագիրին մասին ըսուած անվերջ խօսքերէն ետք բառ մը անգամ չ'արտասաներ այն իրողութեան մասին, թէ Թուրքիա այսօր յամառօքն կը ժխտեն այն, ինչ որ պատմութիւնը կը նկատէ 20րդ դարու սեփական ընդհանրութիւններէն մէկը՝ Հայկական Յեղասպանութիւնը: Կայ Եւրոպական Խորհրդարանի որոշումը (1987ին որդեգրուած), ուր յստակ կ'ըսուի. «Թուրքիա Եւրոպայէն դուրս կը մնայ այնքան ատեն, որ չի ճանչնար դարասկզբին կատարուած ցեղասպանութիւնը»: Ֆրանսայի Մերակոյտը նոյնիսկ օրէնք որդեգրած է այս գծով: Միացեալ Նահանգներու Քոնկրէսի բանաձեւը Պիլ Քլինթընը կասեցուց: Իտալիոյ մէջ, Նոյեմբեր 2001ին, Հռոմի պապի խօսքէն ետք, բոլոր կուսակցութիւններու թերձայնեղով որոշում մը ընդունուեցաւ, բացառութեամբ Համայնավար կուսակցութեան, որ աւելի խիստ բանաձեւի մը կողմնակից էր: Շատ լաւ: Սակայն ոեւէ մէկը չ'ուզեր բացատրել, թէ ինչո՞ւ Հայերու մասին ոչ ոք կ'ուզէ խօսիլ:

«ԷՆ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԶԱՅՐԱՅՆԷ ԹՈՒՐԲԵՐԸ, ԻՍԿ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Նոյեմբեր 9ին ամերիկեան «ԷՆ. ՊԻ. ՍԻ.» պատկերասփիւռի կայանին «Սեթրիթէյ Լայթ Խալ» հաղորդումին ընթացքին Պուրթուհի հասցէին վերաբերող արտայայտութիւններ կատարուած են՝ հայրացնելով ամերիկացի թուրքերը: Հաղորդումին ընթացքին թուրքի դերով ելոյթ Միացեալ Նահանգներու մէջ գործող «Թըրքիշ Ֆո-

րում» կազմակերպութիւնը «ԷՆ. ՊԻ. ՍԻ.»-ի դէմ բողոքի արշաւի մը ակասած է: Կազմակերպութիւնը իր համացանցի կայքին վրայ գետեղած յայտարարութեամբ մը յայտնած է, թէ էլըն Փարքըրի «Միտոնալ» էքսփրէս» ճանրածսնօթ հակաթրքական ժապաւէնին նման, այս հաղորդումը եւս պատրաստուած է հայկական եւ յուսկան լոպիներու Ֆիլին անսաւոյր ուժով: «Թուրքերը չեն ատեր հայերը», գրած է կազմակերպութիւնը՝ պահանջելով, որ «ԷՆ. ՊԻ. ՍԻ.» ներողութիւն խնդրէ թուրքերէն:

ՎԵՆԵՏԻԿԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԸՆԿՆՈՒՄԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՄԲ

Եւրոպական Խորհուրդի Վենետիկի Յանձնաժողովը, ըստ ազգայնականական «Կազէր 525» թերթին, պատրաստ է Լեռնային Ղարաբաղի տագնապի կողմերուն օժանդակելու՝ տագնապին լուծման համար: Յանձնաժողովը քարտուղար Եանի Պուրթուհի թերթին յայտնած է, թէ Եւրոպական Խորհուրդին մէջ մարմինը ըլլալով՝ յանձնաժողովը տարբեր երկրներու իշխանութիւններուն «այսպիսի տագնապներու լուծման սահմանադրական լաւագոյն ուղիները» կ'առաջարկէ, մանաւանդ որ Վենետիկի Յանձնաժողովը եւրոպական պետութիւններու քեթիքը աջակցութիւն կը ցուցաբերէ՝ ազգային օրէնսդրական համակարգերու ստեղծման ի խնդիր: Պուրթուհի համաձայն, Վենետիկի Յանձնաժողովը մեծ փորձառութիւն ունի այս առումով, յատկապէս՝ Վրաստանի մէջ, ուր Եւրոպական Խորհուրդի փորձագետները արեւազանկ խնդիրը լուծման մէջ ՄԱԿի գլխաւոր բանազնացին հետ կը համագործակցին Արխաղոյ կարգավիճակի ճշգրտման համար:

Թուրքիոյ «Թ. Ս. Ար. Թ.» պետական պատկերասփիւռի կայանը իր կարգին դատապարտած է «ԷՆ. ՊԻ. ՍԻ.»-ն թուրք ժողովուրդը, թուրքիոյ զորակազմի ինքնին «Թ. Ս. Ար. Թ.»-ն ժխտական ձեւով ներկայացուցած ըլլալուն համար: «Թ. Ս. Ար. Թ.» յայտնած է, թէ միջազգային բոլոր կայանները տեղեկ պիտի պահէ ղէպքին մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.»ԷՆ

Լոնտոնի մէջ գործող «Հայկական Յեղասպանութեան ճանաչման արշաւ» գրասենեակին համաձայն, Նոյեմբեր 13ին անգլիական «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» պատկերասփիւռի կայանը սփռած է «Ընդհանուր պատերազմ» խորհրդով երկար ժապաւէն մը, որուն մէջ ներկայացնելով 1914 - 18 թուականներու Առաջին Աշխարհամարտը՝ անդրադարձած է նաեւ Հայկական Յեղասպանութեան: Ժապաւէնը ցուցադրուած է ռուսուսեան ժամ 10:00ին, կէսօրէ ետք ժամը 4:00ին եւ երեկոյեան ժամը 10:00ին:

ԿԼԵՆՏԵՅԼ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՌԻՍՈՒՅԻՉԸ ԳՈՐԾԷ Կ'ԱՐՁԱԿՈՒԻ

Նոյեմբեր 8ին գործէ արձակուած է Կլենտէյլ քոլէճի ամերիկեան պատմութիւն դասաւանդող Փօլ Ուիլիամսը, որ սպառնացած է Հայ աշակերտի մը՝ վերաւերելով անոր ազգային պատկանելիութիւնը: Ուիլիամսը, որ ժամանակաւոր կերպով կը փոխարինէր քոլէճի ամերիկեան պատմութեան դասախօսը, աշակերտներու վկայութեամբ՝ Հայ աշակերտին սպառնացած է ծեծելով Հայաստան ուղարկել: Ապա նոյն դասարանին մէջ թուրք աշակերտ մը մատնանշելով՝ Ուիլիամսը ըսած է, թէ անոր նախահայրերէն պիտի խնդրէ, որ Հայ աշակերտին վրդ կտրեն: Դէպքին անդրադարձած են նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնն ու Միացեալ Նահանգներու Հայաստանի դեսպանատունը: Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ղէպքը որակած է ցեղային խտրականութեան արարք:

ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ «Կ'ԱՐԴԻԻՆԱԽՈՐՈՒԻ» ՀԱՄԱՅԱՆՅԻ ՄԱՐԶԷՆ ԵՆՐՍ ԵՒՍ

Երեւանի մէջ վերջերս ներկայացուած են Հայ - ազգայնականական համացանցի երկու միացեալ կայքեր՝ www.dialogueazarm.com եւ www.dialoguearmaz.nt.am, որոնք ստեղծուած են Բրիտանիոյ կառավարութեան նախաձեռնութեամբ եւ Պաքոյի եւ Երեւանի մէջ Բրիտանիոյ դեսպանութիւններուն հովանաւորութեամբ: Կայքերէն մէկուն հեղինակը՝ լրագրող Յարութիւն Խաչատրեան «Մե-տիամաքս» լրատու գործակալութեան յայտնած է, թէ «Հայ - ազգայնական երկխօսութիւն» համացանցի ծրագիրը Հայաստանի եւ Ազգայնականի միջեւ երկխօսութեան ուղղութեամբ հետազոտող խմբակներու միացեալ փորձն է: Անոր համաձայն, աշխատանքը կը փորձէ հակազդել Հայաստանի եւ Ազգայնականի ժողովուրդներու միջեւ թշնամութիւնը գարպացնելու քայքայիչ միտումին: Կայքերուն վրայ տեղադրուած են նիւթեր Լեռնային Ղարաբաղի տագնապի պատմութեան եւ հոլովոյթին եւ տնտեսական համագործակցութեան՝ քաղաքական լուծման վրայ ունենալիք անդրադարձին վերաբերեալ: Մրակիրի ծիրէն ներս նաեւ հրապարակուած է «Ղարաբաղեան հակամարտութեան լուծման տարբերակները. գաղափարներ եւ իրականութիւն» Հայ - ազգայնական միացեալ գրքովը, որ լոյս տեսած է Հայերէն, ազգայնականներէն, անգլերէն եւ ռուսերէն լեզուներով:

ՊԱՔՈՒՄ ԵՆՉ

ԲՈՂՈՔԻ ՀԱԽԱՔ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ԱՌՁԵԻ

Այսպէս կոչուած «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութեան» անդամները Նոյեմբեր 13ին Պաքոյի մէջ բողոքի ցոյցեր կազմակերպած են Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու դեսպանատուններուն առջեւ:

Յուցարարները բողոքած են, որ ԵԱՀԿի Մինսքի խմբակի եռանդամ նախագահութեան մաս կազմող Ռուսիա եւ Միացեալ Նահանգներ «աշխուժ չեն տագնապի լուծման ուղղութեամբ աշխատանքներուն մէջ»: Վերոնշեալ կազմակերպութեան անդամները Ռուսիայէն պահանջած են փակել Մոսկուայի մէջ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչութիւնը, հրաժարիլ «Ղարաբաղի անջատողականները հովանաւորելէ»: Անոնք նաեւ դժգոհութիւն յայտնած են, որ Ռուսիոյ մէջ ազգերինք բաղաձայն ճնշումի կ'են- ձգուին: Արեւիկ Չաչի «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութեան» նախագահը, յայտնած է, թէ Մոսկուա անհոգութիւն կը ցուցաբերէ Մոսկուայի թատրոնի ղէպքէն ետք ազգերինքու ղէմ հայածանքի երեւոյթին նկատմամբ: Յուցարարները լուրջապի մը յանձնած են Ռուսիոյ դեսպանատան պաշտօնատարներուն, սպա ուղղուած են ղէպի Միացեալ Նահանգներու դեսպանատուն:

Ամերիկեան դեսպանատան առջեւ ցուցարարները դատապարտած են Միացեալ Նահանգները «Լեռնային Ղարաբաղի տագնապին նկատմամբ անորոշ դիրքորոշում ունենալու համար»: Անոնք նաեւ բողոքած են ամերիկեան Քոնկրէսի 46 անդամներուն կողմէ Արկաղի Ռուկասեանին շնորհաւորական նամակներ յղելու քայլին ղէմ:

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգայն»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցողի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) Գերկայացնել «Ազգայն»-ի ծանուցումներու գրասենեակը:

ԱՉՔԸ ԼՈՅՍ ՈՐՍՈՐԳՆԵՐՈՒՆ ARMURERIE B A R K E V (SAM SPORT) SILMA (ITALY) Beretta - Benelli - Winchester Յարգոյ յաճախողներուն կը ներկայացնէ վերջին նորոյթի որսորդական հրացաններու, փամփուշակներու եւ պիստոլներու ճիւղաւորներու մասին զինքին զինքին Ունեն ճանաչողներուն եւ նորոգութեան յատուկ բաժինը Հասցէ. Պուրճ Համալ, «Արմենիա» պողոտա Ըն. 01-261700, 03-666060

www.hamazkayin.com

Միջազգային Քաղաքական Կեանք

ՉԱՐԱԳՈՒՇԱԿ ԱՉԴԱՆՇԱՆՆԵՐ



Իսրայելի մէջ կանխահաս ընտրութիւններ կատարուելու յայտարարութեանէն ետք, քիչ բան կրնայ նպաստել Միջին Արեւելքի խաղաղութեան հաստատման: Պաղեստինեան պետութեան և Իսրայէլացիներու ապահովութեան երաշխիք հանդիսացող ամերիկեան «ուղեցոյց» քարտէսը, որ արդէն գծուար իրագործելի կը թուէր, վստահարար պիտի ուշանայ եւ միայն անորոշութիւն կը յուշէ: Ընտրութիւններէն ետք, սակայն, տակաւին աւելի անորոշութիւն կայ, որովհետեւ վարչապետ Արիէլ Շարոն պէտք է նախ իր ղեկավարի դերը պահէ Լիբանոսի մէջ՝ դիմագրաւելով նախկին վարչապետ Պենիամին Նեթանիահաճուի մարտաշարաւէրը: Երկուքը արդէն նախաձեռնած են ճակատում արշաւ մը, որ կը նախատեսուի, թէ պիտի շարունակուի մինչեւ ամսուան վերջը, երբ պիտի յստականայ Լիբանոսի ղեկավարութեան պատկերը: Ընտրարշաւը կը թուի ըլլալ խիստ սուր, որովհետեւ Նեթանիահաճու անգիշտ կեցուածք որդեգրեց անցեալ շաբաթ՝ յատկապէս, որ «ձեռքի կը խոստանամ մէկ րան մինչեւ 2003ի աւարտը գործութիւն պիտի չուենայ ՊԱԿի կողմէ ղեկավարուած ահաբեկչական պետութիւն մը»: Նեթանիահաճուի ընտրարշաւի ռազմավարութիւնը յստակ է: Կարծիքս այն է, որ մերթիւկան կը պաշտօնատարներ կը մերժեն այդ յայտարարութիւնները նկատելի սոսկ ընտրարշաւի յատուկ նպատակով: Նեթանիահաճուի համար նման կեցուածք գործադրութեան դնելը

այդքան ալ դժուար չէ: Ան 1998ին հաստատուած «Ուսայ Ռիվըր» խաղաղութեան համաձայնագրին ոչ մէկ բանաձեւը իրագործած է եւ հիմա հիմնովին կը մերժէ պաղեստինեան պետութեան և Իսրայէլացիներու ապահովութեան ղեկավարը: Ան նաեւ կը հաւատայ, որ հարկ է պաղեստինցի ղեկավար Եսսէր Արաբիայի երկրէն դուրս ղնել: Վարչապետի պաշտօնին վրայ գտնուած օրերուն, Նեթանիահաճու րսաւ, թէ ոչ մէկ զինուած պիտի կատարէ «հոգ» խաղաղութեան փոխարէն» համաձայնութեան գծով եւ ան յարգեց իր խոստումը: Մինչ նախկին ղեկավարներ ինչպէս Ռապիւն եւ Շիմոն Փերէս համաձայն գտնուած էին արարներուն հողային տարածքներ վերադարձնելու եւ փոխարէնը՝ կայունութեան հաստատելու գաղափարին: Նեթանիահաճու կը հաւատայ, թէ գերագոյն հարցը անվտանգութեան հարցն է: Նեթանիահաճու իսրայէլի պատմութեան ամէնէն ծայրայեղ աջակողմեան վարչապետներէն հանդիսացած է եւ 1999ին իշխանութեան հեռանալէն ետք, պաղեստինեան հարցին վերաբերելու առաւել աջակողմեան դիրքորոշում որդեգրած է: Նեթանիահաճուի յայտարարութիւնները այնքան յարձակողական բնույթ ունենալու վրայ իրեն յստակ է: Կարծիքս այն է, որ մերթիւկան կը պաշտօնատարներ կը մերժեն այդ յայտարարութիւնները նկատելի սոսկ ընտրարշաւի յատուկ նպատակով: Նեթանիահաճուի համար նման կեցուածք գործադրութեան դնելը

անոր յայտարարութիւններուն, յատկապէս երբ Նեթանիահաճու մամուլին Պուշի առաջարկները առայժմ օրակարգի վրայ չեն: Տանիէլ Քուրթզըլը՝ Իսրայէլի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը, անցեալ շաբաթ հանդիպեցաւ Շարոնի հետ՝ այս մասին բացատրութիւն պահանջելով: Շարոն պահանջեց Ուսայ Ռիվըրը, թէ կանխահաս ընտրութիւնները պիտի չստեղծուին Պուշի ծրագրին շուրջ եղած քննարկումները: Շարոն թէեւ ինքզինք կը ներկայացնէ իրրեւ ինքնազուպուլմի եւ պատասխանատուութեան մարմնացում, սակայն ան նուազ ծայրայեղական չէ Նեթանիահաճուին, երբ հարցը կը վերաբերի պաղեստինեան տագնապին: Տուեալները արդէն բաւարար խօսու են իր իշխանութեան 20 ամիսներուն ընթացքին ան քանդեց պաղեստինեան իշխանութիւնը եւ սպաննեց աւելի քան 1600 պաղեստինցիներ: Արդեօք կարելի չէ՞ որ Նեթանիահաճու տապալէ Շարոնը եւ հասնի Լիբանոսի իշխանութեան գլուխ եւ ապա ստանձնէ առաւել թիրտ կառավարութեան մը ղեկը: Նման սեցարիո մը հաւանական է: Իճրիֆա-տայի սկիզբէն ի վեր իսրայէլեան հանրային կարծիքը հակած է դէպի աջ, որուն իրրեւ «արդիւնք»՝ Նեթանիահաճու կրնայ վարչապետ զայ եւ խաղաղութեան հաստատելու երեք տարուան ժամկէտը լրջօրէն կը վտանգուի: Տակաւին, խաղաղութեան գործընթացը կրնայ ազդուել նաեւ Իրաքի տագնապէն: Ապահովութեան խորհուրդի բանաձեւը կրնայ Ուսայ Ռիվըրը եւ Պաղեստինը գրած ըլլալ պատերազմի եւ ոչ խաղաղութեան ճամբուն վրայ: Նման պարագայի մը արարներու եւ իսրայէլացիներու միջեւ խաղաղութեան գործընթացը կրնայ բոլորովին կանգ առնել, մինչ Ամերիկա իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է այլուր: Եւ իսրայէլի դերը Իրաքի դէմ պատերազմի մը պարագային ուղղակի ազդեցութիւն պիտի ունենայ խաղաղութեան որեւէ նախաձեռնութեան վրայ:

«ԱՐԱՊ ՆԻՈՒՉ»-ի խմբագրական

ԸՆԴԱՐՉԱԿՈՒՄԷՆ ԵՏՔ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՉԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ՊԻՏԻ ԳԻՏԷ ԻՐ ՆՈՐ ԴՐԱՅԻՆԵՐԸ

